



ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Այս իմ երկիրն է

891.99

14933

4-24 Կապույտիցան, Կ.

Կ Կ Կ Կ Կ Կ

20

207

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

891.99

Կ-24

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1967

ԱՅՍ ԻՄ ԵՐԿԻՐՆ Է

~~14933~~
1
5562



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

1949

Շապիկը՝ Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

Սկզբնագրերը՝ ՆԻԿ. ՄԿՐՏՉՅԱՆԻ

СИЛЬВА КАПУТИКЯН
МОЯ СТРАНА

(На армянском языке)

Ереван, Армгиз, 1949 г.



ԿԱՐՄԻՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Այստեղ պայծառ է ողջը այնպես,
Ու լինի ցերեկ, թե իրիկուն
Միշտ առավո՛տ է թվում այստեղ:

Թե տաղնապած ես սրտիդ խորքում
Այս պարիսպների տեսքը հանգիստ
Խաղաղությո՛ւն են բերում հոգուդ:

Ու սրբության դեմ այս դամբանի
Մաքրվում է քո խորքը, ինչպես
Ազնիվ կարմի՛րն այս մարմարիոնի:

Ու վեհանո՛ւմ է հոգիդ այստեղ,
Բարձրանո՛ւմ, հառնո՛ւմ՝ այս լուսավետ
Աշտարակների սլաքի հետ...

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Այս վիթխարի քաղաքում ես մի անցորդ շնանուն,
Ես աննշմար մի կաթիլ՝ այս հորձանքում մարդկային,
Սակայն զգում եմ, ինչպես դիպչելով սուրբ այս հողին
Մեծանում եմ քայլ առ քայլ, ու քայլ առ քայլ
զորանում:

Ես չե՛մ եղել հեռավոր Փարիզներում, բայց գիտեմ,
Այս մեծ հողումն են կոփվում դալիք բախտերը նրանց,
Եվ այս աստղերը՝ մեզնո՛վ, մեր արյունո՛վ վառ պահած
Հողագնդերը շարժող արեգակնե՛ր են արդեն:

Քայլում եմ այս փողոցով ու թվում է սակայն ինձ,
Թե ես կանգնած եմ ահա լեռան ծայրին մի հզուր,
Ու տեսնո՞ւմ եմ այստեղից աշխարհները բոլոր,
Ու աշխարհները բոլոր ինձ տեսնո՞ւմ են այստեղից:

Ես չե՛մ եղել հեռավոր Փարիզներում, բայց անհուն
Իմ սրտո՛ւմն են աշխարհի ճոխությունները համայն.
Չուլված այս հոծ երթերին ես հպա՛րտ եմ հավիտյան,
Որ այս անմահ քաղաքի մի անցո՛րդն եմ անանուն...

ՄԵՏՐՈՅԻ ՔԱՐՏԵԶԻ ՄՈՏ

Ամեն

ծայրերից

մայրաքաղաքի

Շառավիղներն այս դալիս են անքուն

Գալիս են,

հատվում,

դրկում մեկ-մեկի

Ռեռլուցիայի հրապարակում.

Նայում եմ երկար,

և այս պարզադեմ

Քարտեզը աչքիս թվում է մի խոր

խորհրդանշան,

ու թվում է, որ

Շառավիղներն այս երկարո՞ւմ են դեռ,

Երկարո՞ւմ,

ձգվո՞ւմ,

օղակում են ողջ

Հողադունդը

և դալիս են, հատվում

Այստե՛ղ, Մոսկվայի սրտո՞ւմ այս անխոնջ,

Ռեռլո՞ւցիայի հրապարակում...

29 IV 47

ՉՄԵՌԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Ձյունե՛ր, ձյունե՛ր, այդ ամպերն են ասես փլվել ու
ծանրացել
Փողոցներին, պուրակներին, տաճիքներին հազարաձև։

Ու քաղաքը՝ ճերմակ դարձած՝ խառնվել է երկնքի
հետ՝

Ստեղծելով մի մարմարե անեղրությո՛ւն խաղաղավետ։

Սառնամամիքն է մոլեղնում, այրում օդը իր ցուրտ
հրով,

Զրհորդաններն են կարկամել՝ սառցակալած լեզուներով։

Մարդիկ՝ ձմռան մորթերի մեջ ու ոտքերը՝
թաղիքներում,

Բայց թեթևոտն շտապում են՝ մշտազբաղ ու անդադրում։

Եվ անթիվ են նրանք այնքան ու տաք՝ շունչի ծովսը
նրանց,

Որ թվում է նրանց շնչից մեղմանո՛ւմ է ցուրտը անսանձ։

Ձյունե՛ր, ձյունե՛ր, բայց ո՛ւր արդյոք կա այսքան
կյանք, այսքան կրակ,

Որքան այս պաղ մշուշներում, այս անսահման

ձյունների տակ...

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Թե ամառ լինի,

թե ձմեռ մի խիստ,

Թե զարթնող զարնան օրեր ձնհալի,

Ծաղկած են աշատեղ պուրակները միշտ

Բողբոջ խմբերով երեխաների:

Վերմակի ճերմակ ձյունների միջից

Չնծաղիկի պես գլուխնին հանած՝

Մեկը քնել է սալակի միջին,

Մեկը բացում է աչքերը կամաց.

Մեկը՝ մայրական գրկի մեջ զարթնել

Ժիր գեղգեղո՞ւմ է,

խաղո՞ւմ է,

շողո՞ւմ.

Մեկը թողել է մոր ձեռքը արդեն

Ու թիփփալով քայլե՞րն է փոխում:

Շուրջը եռում է քաղաքը, հուզվում,

Էլեկտրոքարշը զանգում է էլի,

Բարձրախոսները բերում են անզուսպ

խռովքը

օտար

օվկիանոսների

Տենդոտ սուլո՞ւմ են,

անցնո՞ւմ են,

թեքվո՞ւմ

Դեսպանորդների ավտոները պերճ,
Թարթի սյուներից զայրույթը պոկվում
Ու կուտակվում է հոգիների մեջ,—
Իսկ նրանք, պայծառ մանուկներն այնտեղ,
Ջինջ պուրակներում, ծառերի բույրով
Խաղում են խաղաղ,

նայում են անմեղ,

Արդար քնի մեջ ժպտում անխռով,
Ասես մանկական բնազդով բարի
Զգում են նրանք իրենց հաշտ հոգում
Թե ի՞նչ

երջանիկ

ժամանակների

Համա՛ր են նրանք մեծանում կյանքում...

ԼԵՆԻՆԳՐԱԴ

Երբ իմ դեմ՝

ելնում

մառախուղներից,

Հանդարտ դժվոր՝ է քաղաքն այս ահա,

Երբ գործի կանչող դործարանների

Սուլլե՛րն են փռվում քաղաքի վրա,

Երբ անցորդներն են անցնում իմ կողքով՝

Զինվորի պես զո՛ւսպ,

և լո՛ւրջ,

և ազնի՛վ,

Մեկը՝

բազմամյա

բանվորի տեսքով,

Մեկը՝ երազներով լցված պատանի,

Երբ՝ կամուրջներով իր երկաթանիստ

Խաղաղ ու դանդաղ անցնում է Նևա՛ն,

Սյունաշարերի գրանիտը խիստ

Խրոխտ ճեղքո՛ւմ է մշուշը ձմռան,

Երբ իմ դեմ՝

կանգնած մի ոտքի վրա

Գոռ

ծառն է լինում

Պետրոս մեծի ձին,

Ծափեր բացվում է կամխաժն ահա,
Լի հալարառությամբ անհուն իր դանձի,
Երբ կարդում եմ ես իմ հանապարհին
Հուշատախտակներ՝ անդին ու ասդին՝
«Այստեղ

զարկե՛լ են

ցար

Ալեքսանդրին...»

«Այստեղ

լենինը

եղել է նիստի...»,

Երբ Չմեռային պալատ եմ մտնում,

Ուր դրսի պատին

հավերժ

թողե՛լ է

«Ավրորա»-ն՝ իր մեծ զարկի հեռքերը՝

Որպես

սեպագիր

տրձանադրություն,—

Ես հասկանում եմ, թե ինչպե՛ս կանգնեց
Բոցի՛,

սառույցի՛,

քաղցի մեջ՝

անթա՛րթ,

Թե ինչո՛ւ անթիվ քաղաքների մեջ

Հենց

լենինգրա՛դը

դարձավ

լենինգրա՛դ...

ԱՐԵՎԸ ԼԵՆԻՆԳՐԱԴՈՒՄ

Քնձ այրե՛լ է անշեջ արևն Արարատյան,
Արևների մե՛ջ եմ մնացել,
Ու վառվելով շողից՝ հաճախ չեմ ղգացել
Թե ի՞նչ պարզե է նա՝

շո՛ղը

արեգական:

Բայց ի՞նչ բերկրությամբով, կարոտանքով ահա
Ես նայում եմ զարթնած այս արևին վճիռ,
Որ մինչև կեսօր տևող անձրևների միջից
քնքռւշ

փռվե՛ց հանկարծ

Լենինգրադի վրա:

Բացվե՛ց ողջը մեկեն.

Նևա՛ն, հպարտ Նևա՛ն

Հաճեց հյուրընկալել իր մեջ արեգակին,
Մարմար արձաններում արյուն խաղաց կյանքի,
Գրանիտները մռայլ մեկեն պայծառացան:
Շաղոտ վիտրինները ցոլցլո՛ւմ են, ալրվո՛ւմ,
Կանայք վար են առնում թիկնոցները նորից,
Ու քայլում են թե՛թե,

ցողաթաթա՛խ,

թովի՛շ,

Սուղված ասֆալտների խոնավ հայելիում:
Ինչ թուխչ է արեն

այստեղ,

Լենինդրողում,

Փութկոտ մայրերն ահա դուրս են բերում կամայ
Մանուկներին՝ ճերմակ սալակներում քնած,
Որ քնի մեջ անգամ արևի՛ն են ժպտում.
Ու անցորդներն ասես ողջունո՞ւմ են իրար,
Գոհությունն է խաղում նրանց դեմքին,

խակ էս

Մի ծանոթ եմ դտել Նրևանից ասես,
Ու մենք Նևակիով մեկտեղ իջնում ենք վար...

10 LV 47

ՌԱՅՆԻՍԻ *) ՇԻՐՄԱՔԱՐԸ ՌԻԳԱՅՈՒՄ

Ես՝ Հայաստան երկրի դուստր և բանաստեղծ,
Անցած հայրենիքիս ճամփաները առատ,
Հասած նրա եզրին՝ արդ՝ կանգնել եմ այստեղ,
Մեծ Ռայնիսի հպարտ շիրմի առաջ:

Եվ ի՞նչ, այս փառահեղ շիրմաքարի կողքին
Կարոտ՝ ինձ է նայում հանդիպմի մարմարին՝
«Վշտդիմ Մանուելյան, ծնված քսան թվին,
Ընկած Ռիգայի մոտ՝ քաջի մահով»...

Ես՝ Հայաստան երկրի դուստր և բանաստեղծ,
Արդեն երգի փոխվող մտածումը շուրթիս,
Ուզում եմ քեզ, կա՛տվիտ, ես այս պահին տեսլ
Եղբայրության խո՛սքը ժողովրդիս:

Բայց ի՞նչ տեսմ արդյոք, ես ի՞նչ խորհեմ կրկին,
Որ առավել լինի խոսուն ու զորավոր,
Քան ա՛յն, որ հանգչո՛ւմ է քո Ռայնիսի կողքին
Ռիգայի մոտ ընկած մի հայ ղինվոր...

21 XI 47

*) Լատվիական ժողովրդի մեծ գրողը:

ՋԱՄԲՈՒԼԻ ՀՈՐԵԼՅԱՆԸ ԱԼՄԱ.-ԱԹԱՅՈՒՄ

Մենք եկել ենք այստեղ հեռուներից անվերջ
 Ի՛նչ վիթխարի ճամփա, ասես իրա՛վ
 Մեր այս հողի համա՛ր ինքնաթիռը ծնվեց,
 Որ մեզ առավել հե՛շտ կապի իրար:
 Ու մեկտե՛ղ ենք հիմա, բերած մեր աչքերում
 Մանկությանից սովոր տարբեր հորիզոններ՝
 Մենք խոսում ենք ասես իրար գիտենք վաղո՛ւց,
 Եվ կամ իրար վաղո՛ւց ենք որոնել:
 Մենք՝ հո՛ծ, բազմալեզո՛ւ, մեր երկիրը՝ անծա՛յր,
 Թեև եղբայրության մենք նույն խոսքն ենք խոսում,
 Բայց եղբայրնե՛ր, մենք ո՛նց հասկանալինք իրար,
 Ասե՛նք,
 թե չլիներ
 ռուսաց լեզո՛ւն...

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ

Ինձ ծանոթ է թվում աշատեղ տմեն մի լեռ,
Հարազատ է աշատեղ ողջը այնքան.
Ասես Հայաստանից պատկերներ են առել
Ու բերել են աշատե'ղ՝ Ղազարխատան.
Ո՛վ կարող էր խորհել, որ միակերպ, տարտամ,
Ավազներից հետո, որ անվերջ են թվում,
Պիտի բացվի մեր դեմ փարթամ Ալմա-Աթան,
Կանաչ մի օաղիս՝ անապատի հրում:
Ու քայլում եմ ահա այս մայթերով վերձիդ,
Փողոցներն ասես արծակ ծառուղիներ.
Նոր ու ճերմակ շենքեր՝ մտերմորեն գողարիկ
Կանաչների միջից ողջունո՞ւմ են ինձ դեռ:
Ու թվում է վաղուց ես տեսել եմ արդեն
Այս լայնահեմ, նեղաչ, ժպտուն անցորդներին.
Այդ Զամբուլի երգի՜ց արդյոք նրանց գիտեմ,
Թե դեռ մայրս է վաղուց պատմել նրանց մասին.
Այդ ինձ հետ է ծնվել մտերմությունը այս,
Կռիվներո՛վ, կամքո՛վ, արյա՛մբ սրբագործվել,
Նրա համա՛ր Կերչում հայ գինվորը ընկավ,
Որ ես այս մայթերով բարձրանամ վե՛ր:
Ու քայլո՞ւմ եմ ես հիմա,

խորթ չէ հարավուհուս

Այս ա՛րևը, այս շոգ խենթությո՞ւնը ամռան,
Մինչ ծեր Ալա-Թաուն՝ ձյունաշխարհից իր լույս
Ի՛նձ է նայում՝ մեր սեգ Արարատի նման:

ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ

Ես լսում եմ քեզ, Սաբիթ Մուկա'նով, *)
Ակադեմիայում քո հայրենի,
Ու չեմ հասկանում, ափսո՜ս, սակա՛յն ես
Քո հայրենաբառ խոսքը հիմի:

Ես չեմ հասկանում լեզուդ, Մուկա'նով,
Եվ սակայն գիտեմ, որ դեռ երեկ
Քո շոր, բզկտված Ղազախստանը
Հողմերի դիմաց՝ յո՛ւրտ էր երեք:

Ու ձգվո՛ւմ էին ավազուտները
Մերկ ոտների տակ քո շվո՞րների,
Ուր ծարավ էին անգամ ուղտերը,
Երկիրը՝ լե՛րկ էր, հողը՝ վայրի՛...

Ես չեմ հասկանում լեզուդ, Մուկա'նով,
Եվ սակայն գիտեմ՝ ծաղկել հիմի,
Դարձե՛լ է քո ողջ Ղազախստանը
Ալմա-Աթայի խնձորենի:

Ուր անապատ էր՝ հիմա ճամփա՛ է,
Հիմա քաղա՛ք է, գյո՛ւղ է փարթամ,

*) Մովսեսական Ղազախստանի նշանավոր գրողներից:

Յորենո՞վ է ծփում զարթնած Ալթայը
Ժողովրդիդ պես հյութեղ ու թարմ:


Ահա իմ կողքին լարված լսում է
Քեզ մի լրջադեմ զաղախուհի,
Վստահ, ոգեշունչ դու դեռ խոսո՞ւմ ես
Ակադեմիայում քո հայրենի:

Ես չե՞մ հասկանում լեզվիդ բառերը,
Սակայն տեսնում եմ՝ ո՞նց են փռվում
Գալիքի անհուն լայնությունները
Քո զաղախապան նեղ աչքերում...

Վ XII 48

14933

A 5562



ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ ԻՆՔՆԱԹԻՈՒՅ

Լեռները

Ահա երկինքը, որին անհաս
ես չոկ երգել եմ ու երազել,
Հիմա ես ինքս եմ այնտեղ հասել,
Հիմա ես ինքս եմ ասես երազ:

Եվ այս լեռները, նրանք միայն
վերի՛ց են սովոր նայել մարդուն.
Հիմա փռվել են այնտեղ՝ դաշտում
Մանկացա՛ծ, փոքրի՛կ, անօպնաղա՛ն...

Դիզվում են ամպերը, օ՛, այդ նրանք՝
Լեռնե՛րն են ասես ծածկում իրենց,
Որ ես չտեսնեմ՝ ո՛նց են իրենք
Խոնարհված փռվել իմ ոտքի տակ...

12 VI 46

Երևան—Մոսկվա

ՀՈՂԻ ԿԱՐՈՏԸ

Ամպերը, ամպերը, դիզվել են ամպերը.
Անձիր են, անծայր են, ահհու են, անվերջ.
Թվում է երկիրը առհավետ կորել է
Ու մենք որբացել ենք այս երկնքի մեջ:

Թռչում է, սուրում դեռ անփուլթ ինքնաթիռը,
Եղյամբ սառել է թևերին, վրան.
Մրսում ենք, տխրում ենք, ու չկա երկիրը,
Ամպերը, ամպերը, ամպերն ահաահման:

Ու հանկարծ ճեղքից մի, ուր նոսր են ամպերը
Հողի մի կտոր է վարից երևում.
Կարոտած նայում եմ անձանոթ այս հողը
Ծննդյան վայրիս պես հարազատ է թվում...

5 VII 46

Մասկվա - Ալմա - Աթա

ԻՆՔՆԱԹԻՌՈՒՄ

Եւ թաշ տալով կողքից բռնով տապրակը իր՝
Մի գլուղացի դադախ ինքնաթիռ է նստում.
Նրկնքում ենք արդեն, մինչ ես հետաքրքիր
Դեռ նրան եմ նայում ու գոհությամբ ժպտում...
Օ, դիցական Իկար՝ ողբերգորեն խիզախ,
Ու իմպիաական բարձրից քո դարավոր փառքի
Կարո՞ղ էիր խորհել, որ քեզ պիտի հաղթի
Լայնամորուք, փոշոտ մի հողաբույր դադախ...

12 VII 46

Աւմա-Աթա—Մասկովա

ԽՈՂ՝ ԳՆԱՅՔԻ ՄԵՁ

Պահեր են եղել, որ երբ դու նեղսիրտ
Տրանջացել ես, որ աշխարհում
Չես ծնվել դու մեծ ու մեծանուն,
Որ չի՛ շողշողում աստղը փառքիդ...
Բայց նայի՛ր մի պահ այս ծերունուն,
Սլաքավարն այս, որ լրջախոհ
Կանաչ դրո՛շ է քո դեմ բռնում,
Որ վստա՛հ անցնի գնացքը քո:
Այսպես երթեր են եկել, անցել,
Գնացքներ՝ լցված կյանքով, շնչով
Ու ոչ մի անցորդ չի խմացել
Նրա անո՛ւնն իսկ. բայց անվրդով
Նա ճանապարհ է բացել նրանց
Ինքը մնալով միշտ անանուն,
Ու ծերացե՛լ է այսպես անդարձ
Այս փոքրիկ, անհայտ կայարանում...

Արդ, ջանա՛, որ քո կյանքն էլ լինի
Մարդու երթի դեմ՝ կանաչ դրո՛շ
Որ մարդը վստա՛հ, վստա՛հ անցնի
Իր ճանապարհը, անցնի որո՛շ,
Թեկուզ և ինքդ, ինքրդ մնաս
Հեռվում աննկատ և անանուն,
Ինչպես հերթապահ ծերո՛ւկը այս
Այս փոքրիկ, անհայտ կայարանում...

ՀԱՆԳՍՏԻ ՏԱՆՐ

Միջօրեի հանդիստ, միջօրեի արև,
Որ թափում է ոսկի՝

դեղի՛ն,

օրա՛նժ.

Թուլացե՛լ է ծովը և ափերին մարել,
Շող շնչում են անտառ ու ապառաժ:
Ու ծովորե՛ն, անփո՛ւթ՝ ծովափին են փռվել
Լողվորները խոնավ՝

եղած ծովից.

Ծովն այնքա՛ն է խաղաղ, ասես շունչը պահել
Եվ գո՛լ՝ սպասում է նրա՛նց նորից:
Մեկը՝

հակատին սալի,

վազում, ծովն է նկատում,

Օրորվո՛ւմ է հեռվում ինչոր նավակ,
Լայն ծղոտի տակից մի աղջիկ է ժպտում
Ատամները՝ սառո՛ւյց, դեմքը՝ այրվա՛ծ:
Ու լցվո՛ւմ է հողիս այս տաք խաղաղությամբ,
Ու ինքն իրեն ասես իմ մեջ երգ է հյուսվում
Այս կեսօրի մասին,

այս անդորրի անափ,

Այս նավակի, որ ծուլ օրորվում է հեռվում,
Եվ թուխ այս աղջկա, որ ժպտո՛ւմ է դողալիկ

Ատամները՝ սառո՛ւյց, դեմքը՝ այրվա՛ծ...

Հանկարծ

մոտ է վազում

փոստատարը փոքրիկ՝

«Տոլլատտիի վրա մահափո՛րձ է արված...»

.

.

Լրագիրը արագ ձեռքից ձեռք է անցնում,

Աղմկում են թերթի վերնագրերը խռով՝

«Գործադուլնե՛ր,

ցույցե՛ր,

հեռագիրնե՛ր,

հուզո՛ւմ...»

Ու զայրույթը՝

թերթի էջերից ալիքվելով

Հորձանքի պես մեկին ծովեզերք է խուժում,

Լցվում սրտերի մեջ:

փռվում դեմքի վրա,

Եվ արևից թմրած դեմքերն ակնթարթում

Դառնում են խի՛ստ,

խոժո՛ռ,

դառնում մռա՛յլ...

Հողվորն ափ է գալիս,

ու այնպե՛ս է թվում

Ճակատին

խորացե՛լ է

սպին գնդակների,

Լայն ծղոտի տակից աղջիկն էլ չի՛ ժպտում,

Ատամներն է սեղմում՝

ցասումով լի՛...

Փշրվո՛ւմ է շուրթիս երզը խաղաղության
Ծովը անթարթ է դեռ, նման անդորր սրտի.
Ծով, փոթորկի՛ր,

$$L_{\mu} \mu' \mu,$$

Այսպե՛ս է հանդիստն իմ սերնդի...

20 VII 48

ԵՐԳ ԹԱՓԱՌՈՒՄԻ

Լալ է մեկ-մեկ թողնել և առն,
Եվ հին քաղաքը հայրենի,
Հեռուների տենչը սրտում՝
Բռնել ճամփան թափառումի:
Ո՛ւր կա այսքան անծիր ճամփա,
Եվ հայրենիք՝ այսքան անհուն,
Ո՛ւր կարող է հոգին այսքան
Թևավորվել ճամփաներում:

Եվ աշխարհներ են ծավալվում
Ընթացքի դեմ իմ թևավոր.
Ինձ գերում են ու գրավում
Քաղաքները բաղմաժխոր.
Ես խառնվում եմ հարազատ
Հորձանքներին հաղաթների,
Ես և մենա՛կ՝ ամենքի մոտ,
Եվ միասին ամենքի հետ:

Ու թարմացա՛ծ, թեթևացա՛ծ,
Սրտով պաշտառ, սրտով բարի,
Ու հոգուդ մեջ բերած անսանձ
Կայնությունը հեռուների,—

- Լա՛վ է՝ զվարթ, կարոտագին
Հայրենի տուն դառնալ նորին,
Եվ սիրելո՛ւ աշնտիդ կրկին,
Եվ ապրելո՛ւ հավերժորեն...

9 XII 46



ՆՈՐԻՑ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ոտքերիս հեռվի փոշին՝ դարձել եմ դիրկդ նորից,
Թողել եմ հաղար ճամփա՝ պերճանքի փայլը վրան,
Վարդաստան աշխարհի մեջ՝ դու նորից ժպտո՞ւմ ես ինձ
Հայրենի դաշտում բացված՝ ի՞մ ծաղիկ, ի՞մ Երևան:

Փոխվե՛լ եմ նորից, անդի՛ն, ոտքիս մոտ մի նոր աղբյուր,
Առանց ինձ դարձնել մի շենք, զուգել է մեր տան
ճամփան,

Ասես իմ դարձի համար մինչև մեր տնակն ու դուռ
Ասֆալտից գո՛րդ ես փռել, ի՞մ գողտրիկ, ի՞մ Երևան:

Ինչքան ճոխ քաղաք տեսել, հարազա՛տ, հիշել եմ քե՛զ,
Ուզել եմ դո՛ւ էլ լինես գեղաշուք՝ նրանց հման.

Ամեն նոր քարիդ համար ցնծո՞ւմ եմ մանուկի պես —
Իմ փողո՛ց, իմ բա՛կ ու դուռ, ի՞մ փոքրիկ, ի՞մ Երևան:


Թե մեկ-մեկ թողել եմ քեզ, ճամփեքի գերին դարձել,
Այդ դո՛ւ ես վառել հողիս, տենչերով լցրել նրան,

Գերվել եմ ուրիշ գեղով՝ աշդ դո՛ւ ես աշքս բացել,
Սոփորեցրել լավի՛ն, բարձրի՛ն, ի՛մ բարձրիկ, ի՛մ
Երևան:

Ես քեզ հետ հասակ առել, դու ինձնից եկար-անցար,
Ամառ եմ արդեն դառել, դու նորից շո՛ւնչ ես դարձան.
Դու ծաղկի՛ր, աշգուդ համար իմ կյանքի աղբյո՛ւրն
էլ առ,

Թող ապրե՛մ հավերժիդ մեջ, ի՛մ գալիք, ի՛մ Երևան:

25 VII 47



Իմ աչքերում՝ հորիզոններ, հորիզոններ,
Իմ հոգու մեջ՝ ճամփաների շքեղ հեռուն,
Ու աշխարհներ, ու քաղաքներ հսկա ու ծեր,
Նրանց աղմուկն ու կախարդանքն իմ ունկերում՝
Դառնում եմ տուն. ու զնացքի պատուհանից
Աչքիս ընկան ծաղիկները ճամփաների,
Սիրտըս խաչատա՛յ մտերմությամբ. դո՛ւք, իմ սնրիծ
Դուք սուրբ ու նուրբ իմ ծաղիկներ մեր դաշտերի,
Ինչ լա՛վ է, որ ձեր անշուշտ տեսքից այդ հեղ
Դեռ դողո՛ւմ է սիրտըս այսպես...

27 V 47

ԵՐԵՎԱՆԻ ԱՇՈՒՆԸ

Ես սիրում եմ աշո՛ւնըդ, Երևա՛ն,
Աշնան քո արևի վերջին շողը,
Ինչպես աշնան խարջի քո խաղողը
Նա քա՛ղցր է,
դեղի՛ն,

խնկանմա՛ն,

Ես սիրում եմ աշո՛ւնըդ, Երևա՛ն:

Ես զգա՛ստ եմ նայում հիմա քո դեղերին,
Ինչպես հասակն առած մարդը՝

իր սիրելուն.

Ճաշակելով շունչը հզոր քաղաքների
Գիտե՛մ, թե ինչքա՛ն է դեռ պակասը, թերի՛ն
Քո թաղերում,

քո խուռն փողոցներում:

Եվ շթոշնեց երբեք իմ աչքի դեմ սակայն
Աշնան քո հմա՛յքը,

աշո՛ւնը քո,

Երբ մայրորեն հոգնած այգիներ՝ լող են հանգչում՝
Աշխարհներին տալով՝

տաք մրգերից հետո

Իրենց տե՛րեն անդամ:

Երբ արևը՝

Թափած կիրքը ամռան տենդում
Ու հասցրած հացը, միրգը՝

աշխարհի մեջ,

Երևա՛նն է ասես ընտրում հանգստի տուն
Ու դեկտեմբեր մինչև հպարտ ճեմում մեզ հետ,
Հանգստանում շքեղ Աբովյանում, Նորքում:

Օ՛, այս շքեղ Նորքի բուռն բաղմերա՛նդը,
Միթե՞ նման է այս նախօրեի մահվան.

Թող դարո՛ւնըդ սիրեն ուրիշները,

սակայն

Այս շոր տերևո՛ւմ իսկ ես տեսնում եմ կյա՛նքը:

Ես սիրում եմ աշո՛ւնըդ, Երևա՛ն...

16 III 48՝

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Դիվիզիայի կոմիսար Թորգոմ
Շահինյանի հիշատակին:

Տաք երեկոն է ծվարել տանը,
Խաղաղ շնչում է ամեն անկյուն,
Ասես խաղում է ժիր վառարանը,
Մեկ բոցկլտում է ու մեկ հանդում:

Տղան՝ փոքրիկը, ինչ-որ տաշում է,
Աղջիկը տարված կարդում է դեռ,
— Մա՛մա, գիտե՞ս ինչ, — տղան ասում է,
Ես մոդելիստ եմ արդեն դարձել:

Նայում է մայրը. ինչ մեծացե՛լ են
Երեխաները, ինչքան արա՛դ.
Աղջիկը ասես, ասես երե՛կ էր,
Որ նստում էր հոր ուսի վրա...

Իսկ հիմա... պատից նայում է հայրը,
Մեծ է աղջիկը, մեծ է տղան.
Եվ ասես դո՛հ է նայում նկարը,
Ասես ասում է՝ «Լա՛վ է, նվա՛րդ...»

Նայում է մայրը. խաղաղ է, լուռ է,
Հրա՛շք պատահեր հանկարծ հիմա.
Բացվե՛ր, ա՛խ, բացվե՛ր, հանկարծ այս
դուռը,

Հին օրերի պես ներս մտնելը նա՛:

Բարեկեր հանդարտ, կախեր զլխարկը,
Մեկտե՛ղ նստեին այսօր թեյի,
Ստուգեր հետո աղջկա տեսրակը,
Ու ժպտար՝ «Ապրե՛ս, ի՛մ սիրելի»:

Հիմա էլ տղա՛ն նստեր ուսին իր
Ու գեթ մի՛ անգամ տսեր «Հայրի՛կ»
... Վառարանի մեջ՝ երեք հուլյսի պես
Շողում է բոցը, մարո՛ւմ մանրիկ:

Աղջիկն զգում է մորը, բայց լուռ է,
Իբրը կարդում է խորասուզված.

—Մա՛մա, վերջացրի՛,—ուրախ ձայնում է
Տղան ու հետո... լռո՛ւմ հանկարծ:

Իսկ պատի՛ց, պատից նայում է ինքը,
«Կալի՛ս ես, Նվարդ, հարկավոր չի՛,
Չէ՛ որ ես ընկա, որ իմ որդիքը
Արցունք շտեմենե՛ն հարազատի...»:

9 XII 47

ԺԱՄԱՅՈՒՅՅԸ

Քնե՛լ են ողջ՝ մանո՛ւկ, աշխա՛րհ,
Հուռ դիշերն է թեր բացում,
Բայց նա զարկո՛ւմ է անդադար,
Դեռ տաշում է, հզկո՛ւմ, ծեծո՛ւմ,
Եվ իմ քնած մանկան համար
Նրջանկությո՛ւն է կառուցում...

17 X1 48

ՄԵՐ ԴՐՈՇՐ

Կհսատ, կհսաշեն մի շենքի վրա,
Ուր դեռ ցանցեր կան վերելակների,
Ծփում է հպարտ ու բարձրադնա,
Կարմիր դրոշը, ծփում է էլի:

Երեկ դրոշն այդ՝ գնդերի առաջ՝
Գնդե՛ր էր դեպի հաղթանակ տանում.
Հայացքը նրա կարմիրին հառած՝
Զինվորը դեպի գրո՛հ էր դնում:

Նայում է նրան քարտաշը այսօր,
Ու մոերձն իջնում է առավել արա՛դ.
Վարպետն է նայում ու ձեռքերի տակ
Քարը դառնում է խոյա՛կ փառավոր:

Պատերն օրեցօր վե՛ր են բարձրանում,
Վե՛ր են բարձրանում սյուների ու կամար.
Ասես դրո՞շն է նրանց վեր տանում,
Ասես դրո՞շն է բացում ճանապարհ:

Երեկ վառոդի ծուխն էր ծանրանում
Արնոտ, արնադուլն նրա կերպասին.
Տե՛ս, այսօր նրան շղարշե՛լ է նուրբ
Կառուցման խաղաղ, երազուն փոշին...

ՌԱԶՄԱԳԵՐԻՒՆԵՐԸ

Նրանք ուզում էին քանդել մե՛րը,
 Փշրել մեր արվեստն ու մեր հոգին,
 Որ գոթականի մռայլ ոգին,
 Նրա մահատիպ կամարները
 Ծանրանան այս ողջ հողագնդին...
 Բայց այսօր նրա՛նք, գերինե՛րը՝
 Այրվելով հրից մեր արևի
 Ծեփն են շաղախում այն քարերի,
 Որով մեր հպարտ կամարները
 Պիտի երկինքնե՛ր հառնեն էլի:

Նրանք ուզում էին, որ աշխարհը
 Գերմաներենո՛վ միայն խոսի,
 Որ նրանց ունկը էլ չլսի
 Անգամ մի խոսքը, անգամ բառը
 Այլախոս լեզվից մի ուրիշի:
 Բայց ահա և այս օֆիցե՛րը,
 Նա՛, որ աշխարհին գերմաներեն
 Մահվան վճի՛ռ էր կարդում երեկ,—
 Այսօր սերտել է հայ բառերը՝
 «Շնորհակա՛լ եմ»,

«տո՛ւր»,

«ջո՛ւր»,

«խնդրե՛մ»...

ՆԵՐՔՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դարե՛ր եկան աղետալոր և ավերի դարերում
 Փշրվեցի՛նք աստղերի սկես ու ցրվեցինք աշխարհում,
 Բայց Երասխի ափին մնաց փոքրիկ մի հող՝ անտառիկ,
 Արև՝ մնաց աստղերի մեջ, մնաց հային՝ հայրենիք:
 Այդ դո՛ւ էիր, հայո՛ց արև, Սովետակա՛ն Հայաստան,
 Հոկտեմբերի շնչով ծնված մանո՛ւկ էիր և սակայն
 Հիմա արդեն հասակ առել, դարձել ես աչր մի պարթև
 Եվ քո նորոգ երջանկության ճանապարհին ես արդեն:
 ... Փշրվեցինք աստղերի պես, և դո՛ւ ես մեզ արևում,
 Ու քո շողերն են ճառագում երկրի բոլոր ծագերում,
 Դու՝ խրճիթի լո՛ւյս մենավոր՝ դիշերային ճամփորդին,
 Դու տո՛ւն հանշող մայրական ձայն՝ հայ թափառիկ
 պանդուխտին,
 Քո անունո՛ւմ ընկան ռազմիկ քո որդիները դաշտում,
 Քո անո՛ւնը զավակներիդ հեռուններից բերեց տուն.
 Դու թա՛նկ ես մեզ որպես դրոշ՝ ցողված արյամբ
 զոհերի,
 Դու՝ մոր նման նվիրական, դու՝ մանկան պես սիրելի,
 Եվ աշխարհում հայի համար դու՝ նո՛ր մի լյառ
 սրբազան,
 Դու՝ կարոտի նո՛ր Արարատ՝ Սովետակա՛ն Հայաստան:

ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Նստած է ահա դասարանում իմ թոռների թուր
Մաղերը՝ խարտյաշ են ու դանդուր
ու աշքերը՝ շեկ խաղողի հատիկ.

Դրսում բոցավառվում է Նրեանյան օրը,

Այրում շենքերի մարմարը կուռ

ու դրանիտյա սյունաշարերն անթիվ:

Պատմում է ուսուցիչը հայոց հին պատմության,—

— Այնուհետ եկա՛ն

Պարսիկները՝

ջլատեցին հայոց աշխարհը ողջ,

եկավ Բյուզանդիո՛նը՝

Յևաբեկեց մեր ուժերը տերունական,

եկան արաբնե՛րը՝

սմբակների տակ տրորեցին հողը հայոց:

եկան թաթարնե՛րը՝

ալերեցին մեր տաճարնե՛րը հոյապատկեր,

եկան սելջուկները՝

արյունով ներկեցին քաղաքներն ու շենքերը բլուր:

Ու եկավ այնուհետև խորշա՛կը օսմանյան,

որ հիմն ի վեր

Հողմահարե՛ց երկիրն ու ժողովուրդն համայն

և ի աշխա՛րհս սփռեց փշուր-փշուր...

... եվ միայն

Հայերն իրենց բախտի տե՛րը դարձան կրկին
ի շնորհիվ Ռևուտ՝ Եփրայի Հովտեմբերյան՝
Քրսաներորդ դարո՛ւմ,

Հաղար ինը հարյուր քսան թվի՛ն...

Նստած է ահա դասարանում իմ թոռների թուր,
Մաղերը՝ խարտյաշ են ու դանգուր

ու աչքերը՝ շեկ խաղողի հատիկ,

Դրսում բոցավառվում է Երևանյան օրը,

Այրում շենքերի մարմարը կուռ

ու դրանիտյա սյուճաշարերն անթիվ...

ԺՈՂՈՎՐԴԻՆ

Իմ հա՛յ ժողովուրդ, դու չե՛ս եղել
Թվով՝ մեծագո՛ր ու փառքով՝ պե՛րճ,
Բայց հին Իլիոնից մինչև Փարիզ ու Կերշ,
Բոլո՛ր ճամփաներին ազատության
Մի բուռ քո արյո՛ւնն ես ազնվորեն հեղել
Հնադույն դարերից մինչև՝ երեկ,
Մինչև Ստեփանյա՛ն ու Մանուշյա՛ն...

22 XI 46

ՖՐԱԳՄԵՆՏ

Նայում եմ ահա ես այս քարտեզին,
 Ուր որ տասնվեց տարբեր երանգներ,
 Ծիածանի պես իրա՛ր են հյուսվել
 Ու պարփակվել այս կարմիրի մեջ.
 Այստեղ մարդկային երա՛զն է անմեռ,
 Հավերժ դաշնության, սիրո, ճշմարտի երա՛զը վերին
 Գտել բաղձալի իր մարմնացումը.
 Սիրո՛ւմ եմ կարմիր այս դաշնությունը
 Ուր ամեն անկյուն հարազատ է ինձ՝ իմ երգի նման,
 Օրհնո՛ւմ եմ կարմիր այս դաշնությունը,
 Որի փրկարար հյուսվածքո՛ւմ միայն
 Աշխարհի խղճից ու քարտեզներից ջնջված երկիրըս,
 Գծվեց, ունեցավ իր ձևն ու դույնը:
 Կապվա՛ծ եմ, կապված այս մի բոլո հողին,
 Այս Արարատին, այս շիրիմներին,
 Սիրում եմ նրա մոխիրնե՛րն արևոտ,
 Սիրում եմ աղնիվ ավերակների բեկորները հին,
 Սիրում՝ բարձրացող նորակերտների ամեն մի քարը և
խիճը անդամ,
 Որ երջանկության շարվածքում այս մեծ
 Թեկուղ աննշմար մի ճե՛ղք է լցնում...

ԵՐԳ ԱՐՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Յախտի համար քո աշխարհքի
Դու վառվեցիր լույսի նման,
Հայոց երգի, հայոց վերքի
Բոցո՛ւմ լցված մեր Արուվյան:

Ելար բարձրիկ Մասիսն ի վեր,
Բարձրի՛ց տեսար վերքերը մեր,
Որ խո՛րն էին մեր ձորերից,
Որ լա՛յն էին սև ծովերից:

Ու բարձրերից հեռո՛ւն տեսար,
Տեսար աստղը հյուսիսամասը,
Ասիո՛ւ նրա Լույսո՛ւմ միայն
Պիտի բացվի մեր մութ համփան:


Բացվե՛ց հայոց համփան տնդարձ
Այդ մեծ աստղի լույսով արդար,
Ու բաբախո՛ւմ է կենդանի
Հայաստանը քո հայրենի:

Կորա՛ր՝ անհուն քո վերքի հետ,
Բայց դաե՛լ ենք մենք քեզ հավետ,
Եվ ապրում ես, որպես երգում
Մեր աշխարհում ու մեր սրտում:

ՍԵՎԱՆԻՆ

Դու արյան պես թափնիկ ես, Սևա՛ն,
Ու հարազատ՝ արյունի պես,
Եվ արդ՝ իմ հողը նախրյան
Եվ վաստակած, և հրակեզ,
Ուժ է ուզում իր երակին,
Որ նորոգվի՛, որ թարմանա՛,
Պատանությա՛մբ լցվի կրկին,
Ու լույսերո՛վ շռայլանա:

Թող ներարկվի՛, որպես արյուն
Զուրդ՝ նրա երակներում...



Իջնում եմք մենք ի վա՛ր, ի վա՛ր, հողի խորունկ
շերտերն ի վար,
Ահա մեր դեմ խորքը երկրի ու թունելները մթադալար,
Այս խավարից լամպերն ասես շնչարգելվում են,
խեղդվում,
Կիսալույսում ողջը մի պահ անիրական է մեզ
թվում:
Եվ հիրավի, մի՞թե իրոք այս խռոշները լայնահուն
Բացել է մարդը, ու վայրի քարաժայռները այս
դարհուր
Մի՞թե ձեռքն է փշրել մարդու, ու միրավոր քար ու
ժայռից
Ջուր է հոսում, ասես արյուն՝ հողագնդի երակներից:
Նս խոնարհվո՞ւմ եմ հիացքով այն բազկի դեմ, որ
աշխարհում
Այս խավարից լո՛ւյս է հանում...

ՄՈՍԿՎԱՅԻ ԿԱՐՈՏԸ

Առավոտը եկել է ու լցվել
 Իմ փոքրիկ, իմ խոնարհ սենյակում,
 Ու նորից նոր մի օր է բացվել
 Փողոցում, մայթերին, երկնքում:
 Եվ ինչպես գնում է գործի
 Հարևանըս ամեն առավոտ,
 Ամեն օր իմ տան վրայից
 Անցնում է սավառնակ մի ծանոթ:
 Ես գիտեմ, հենց այսօր իրիկուն
 Մոսկվա՝ Լհասնի նա նորից,
 Ու աչքըս՝ կարոտով մի անհուն
 Գնում է նրա ետևից...
 Ինձ է՛լ, նա ինձ է՛լ է մի օր
 Մոսկվա տարել իր թևերին,
 Այդ օրից դարձել է նա մի նոր
 Սրտակից ու մի նոր մտերիմ:
 Այդ օրից, երբ ամեն առավոտ
 Անցնում է վրայով նա մեր տան,
 Բացվում են աչքիս դեմ հեռավոր
 Երկինքներ, ճամփանե՛ր դյուխական...
 ... Մոսկվա:

Վայրենք:

Աերողրում:

Փողոցներ,

փողոցներ,

փողոցներ:

Շենքերը՝ լայն բացած աշքերով,
Մայթերը՝ նրթերով ծանրաբեռ:
Հնչում է աղանջիս դեռ ասես
Հարազատ այդ աղմուկը էլի,
Մինչ վերևում հեռանում է արդեն
Հոնդյունը ծախոթ թևերի...
Հաղորդում է ռադիոն Մոսկվայից՝
«Երեք քույրն» է այսօր ՄԽՍ-ում.
Այս հրաշք թռչունը տառեր ինձ,
Լինելի այնտե՛ղ այս իրիկուն...
11 X 47



Երբ հողնում է աշքս այս նեղ հովիտներում, այս
ձամբիաս ինձ միշտ ձե՛ղ է բերում, դո՛ւք, ոռւակա՛ն
լայնություններ:
Երբ տխրում է սիրաս այս լերի ժայռերի մեջ, այս
Ինձ ձեր կատույտն է գուրգուրում, դո՛ւք, ոռւակա՛ն
լայնություններ:

Չե՛մ զղացել փոքրությունը իմ բերդաշափ
Քանի դո՛ւք եք փախում վարում, դո՛ւք, ոռւակա՛ն
լայնություններ:

Չե՛ որ նրա ամեն ծայրից, ամեն վայրի քարաժայռից
Այդ ձեր անհո՛ւնն է երևում, դո՛ւք, ոռւակա՛ն
լայնություններ:



ԽՈՂ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Սերը—նման է նա հայրենիքին,
Հայրենիքի պես նա միա՛կ է միշտ,
Հայրենիքի պես միշտ անդուգական.
Եվ ինչպես հպարտ ու շռայլագին
Աշխարհների մեջ այն գեղեցկանիստ,
Քաղաքներում սեղ ու կախարդածայն՝
Քո սրտում տո՛ւնդ է, հո՛ղըդ, հայրենի՛ն,
Քաղաքըդ գողտրիկ, դյուլը քո հստակ,
Քո բակի առուն, քո հեղ ուռենին, —
Այնպես էլ շքեղ հայացքների տակ,
Գեղեցիկների հույլերում այն պերճ
Սիրած աչքե՛րն են քո աչքերի մեջ,
Սիրած անո՛ւնն է շուրթերիդ վրա,
Եվ սիրահարի սրտում քո անշեջ
Նա՛ է գեղեցիկ ու միա՛կն է նա...

3 VIII 45



Մի՛ մռայլվիր, ի՛մ սիրելի,
Թե հոգնել ես, էլ մի՛ մնա.
Թե դերում են քեզ աշխարհի
Հեռուները, այնտե՛ղ դնա:

Թե դաշտերի՛ն ես կարոտել,
էլ մի՛ փակվիր դու իմ հովտում.
Թե լեռնե՛րն են հեռվից դյուրեղ.
Մի՛ թախծիր այս ստորոտում:


Թե աչքե՛ր կան աչքերիդ մեջ, 33 11 12
էլ ինձ նայել դուր մի՛ ջանա.
Գնա՛, ու թե սերդ է անշեջ,
Դու ե՛տ կգաս, չե՛ս մոռանա...

Գիտե՛ արդեն իմ լուռ հոգին՝
Նրա համա՛ր է աշխարհում
Վանդակը միշտ վանում թռչնին,
Որ դռները փա՛կ են պահում...

ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉ

Հոգնած ձյունները քեզ սպասելով՝
Քո հուր կարոտից հալչո՛ւմ են, արի՛.
Սիրող աստղերը մինչև առավոտ
Ճամփադ նայելով՝ հանդչո՛ւմ են, արի՛.
Անտառներն իրենց ճյուղերը պարզած՝
Հազար ձեռներով կանչո՛ւմ են, արի՛.
Ջրերն աշխարհում քարեքար ընկած՝
Հուզված ու խռով կանչո՛ւմ են, արի՛.
Աշխարհն ինձ համար մի կանչ է թովիչ,
Բոլո՛ր ձայներով կանչում է «արի՛»...

27 IX 45



Իմ սրտի հավերժ հյո՛ւրըս,
Իմ տա՛նն էլ հյուր լինեիր.
Բախե՛ին հանկարծ դուռըս,
Բացեի՝ դո՛ւ լինեիր...

ՈՐՈՆՈՒՄ

Ուզում էի դուրս շփալ այս իրիկուն,
 Մնալ մենակ, իմ մեջ ու ինձ հետ,
 Բայց ինքս ինձ նորից գտա փողոցում,
 նորի՛ց դրսում,

նորի՛ց սիրող,

նորի՛ց խենթ...

Քե՛զ եմ փնտրում:

Բեկ չկաս, դու չկաս,

Բայց դու ես այս փողոցներով ինձ տանում.

Քեզնո՛վ է լի սիրտս,

շուրջս,

ու ճամփաս,

Քեզնո՛վ է լի ամեն հայացք ու անուն:

Մայթին ընկած սլացիկ շուքը ծառի

Խավարի մեջ ինձ քո ստվե՛րն է թվում,

Բարձրահասակ մեկը գալիս է հեռվից՝

Ինձ թվում է թե այդ դո՛ւ ես երևում:

Իմ ետևից քո ոտնաձայնն է ասես,

Ետ է դառնում՝ ուրիշ դեմք է նայում ինձ.

Մեկը խոսեց՝ թվաց քո ձա՛յնն է անտես,

Թվաց դո՛ւ ես ելնում դեմի անկյունից:

Ու փնտրո՛ւմ եմ,

ու փնտրո՛ւմ եմ,

ու փնտրո՛ւմ,

Աբովյանով ելնում եմ վեր, իջնում ցած.
Ես փոթորկոտ խմբերի՜ն եմ խառնվում,
Ես կարոտից խեղդվո՞ւմ եմ գինովցած,
Ո՛չ, ուր լինե՛ս, ինչքան լինես դու հեռվում
Հիմա իմ դեմ կհայտնվե՛ս դու սակայն,
Ով

ինձ նման

որոնո՞ւմ է

աշխարհում՝

Նա կգտնի՛ անպայման...

5 XI 48



Տագնապում են օտար թերթերը՝
Աստ՛մ:

Պատերա՛զմ,

արհաւիր՛ք,

Սպառնում է ամերիկյան եթերը,
Ասում են անկո՛ւմն է աշխարհի

Ասո՛ւմ են...

Իսկ ինձ դեռ դյուլթում է
Երեկոն, ու քայլո՛ւմ եմ կամայ,
Եվ սիրտըս քեզ նորից կարոտո՛ւմ է
Ու նորից տխրո՛ւմ է քեզ համար...

6 III 47

ՏՈՆԱԿԱՆ ԵՐԵԿՈ

Սրտից պոկվող կանչի նման՝
Հրթիռներն են թռչում երկինք,
Համադարկերն ահեղաձայն
Մեղմ են հնչում, նման երգի:

Դուրս է ելել քաղաքը ողջ՝
Զահել ու ծեր, մայր ու մանուկ,
Ալիքվում է քաղաքը հոծ
Ու ինձ է՛լ է հետը տանում:

Գիտե՛մ, դո՛ւ էլ տնից ելել
Ու բաղմամբյան մե՛ջ ես նորից,
Դո՛ւ էլ հիմա նայում ես վեր
Մեր քաղաքի ինչ որ ծայրից:

Մենք հեռո՛ւ ենք վաղուց արդեն,
Անծանոթ ենք ասես դառել,
Բայց այս պահին, գիտե՛մ, գիտե՛մ,
Նույն հրճվա՛նքն է մեզ դուրս բերել:

Նույն սիրով է մեր սրտերում
Մեր երկիրը, մեր սիրելին.
Նույն հիացքն է մեր աչքերում
Երբ նայում ենք հրթիռներին:

Դրանից չէ՞ թվում է մեզ
Այս պահերին մոտ ենք նորից,
Թվում է թե երբե՞ք, երբե՞ք
Չե՞նք հեռացել մենք իրարից...

9 XII 48

ԵՐԳԸ՝ ԳԱՐՆԱՆ ՄԵԶ

Ասես ինձ հեռվից կանչում են անվերջ,
Գնո՞ւմ եմ դյուխնա՞ծ՝ ականջս ձայնի.
Գարունը եկել, լցվել սրտիս մեջ,
Ուզում է փոխվել երգի՛, հնչյունի՛:

Փչում է իմ մեջ խոսքի մի ձնհալ,
Հյուսվում է խոնավ, հողաբույր մի երգ,
Բայց երբ ուզում եմ ես այն շշնջալ,
Բառերն իմ շուրթերից փախչո՞ւմ են բեկ-բեկ:

Փախչո՞ւմ են նրանք, անհետ խառնվում
Երկնքի՛ն, հողի՛ն, լեռա՛ն ծաղկավետ.
Զվարթ բառերըս շուրթիցըս պոկվում՝
Գնո՞ւմ են ջրի կարկաշների հետ:

Թախիծըս՝ դեռ շունչ ու մարմին չառած՝
Արդեն դարնան հետ շնչո՞ւմ է, բուրո՞ւմ,
Ցնորք խոսքերըս՝ ինձ վարում թողած՝
Թռչունների հետ երկի՛նք են սուրում:

Եվ ամեն կողմից մոտի՛կ, մտերի՛մ
Շշունջ եմ լսում, որ ե՛ս եմ երգել,
Զուլվե՛լ է երգըս արար աշխարհին,
Ու շե՛մ կարենում աշխարհից սլոկել...



Ի՞նչ անեմ կյանքը երկար,
Թե նման թղթյա ծաղկի
Թեև միշտ, բայց միալար,
Բայց անբույր մնա՛մ պիտի.

Մի գարո՛ւն ապրեմ թող լող,
Գարնան հետ թողնե՛մ, գնա՛մ,
Միայն թե թույրո՛ւլ, բույրո՛ւլ,
Բուրեչո՛ւլ ապրեմ միայն...

3 XII 47

ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀԵՏՈ

Սիրելի՛ս, այնպես ուրախ եմ այսօր,
 Եվ գիտե՛ս ինչու.

Այսօր առավոտ գնած մեր այս նոր
 Վարապույրների համա՛ր եմ ուրախ...

Ծիծաղո՞ւմ ես դու,

Դե՛, դու շգիտես, թե ի՛նչ անխարդախ

Զղացումնե՛ր կան այսօր իմ սրտում:

Զե՛, որ այն օրից, ինչ պատերազմը սկսվել է և
 ավարտվել ապա,

Այն օրից, ինչ դու կոխվ գնացել ու դարձել ես տուն,—

Մեր սենյակների պերճանքի համար

Սա մեր առաջին գնումն է միայն:

Գիտե՛ս սիրելիս,

Ես կամաց-կամաց, ուզում եմ փոխել մեր սենյակների
 խունացած տեսքը,

Ուզում եմ փոխել կարասիները, հատակի գորգը,

Ուզում եմ, որ մենք ապրենք գեղեցի՛կ, զարդարո՛ւն
 կյանքով:

Ո՛չ, մի՛ համարիր սա մի կանացի թուլություն
 միայն,

Ես այնպես երկար, այնպես զրկանքով ու
 կարոտանքով

Սպասել եմ այս անձկալի օրվան,
Երբ դու, դու կգաս պատերազմներից
Եվ հաղթանակի այդ աշխարհային երջանկության մեջ
Մենք էլ կգտնենք մե'րը՝ փոքրի'կը, բայց մտերի՝ մը:
Վե'ր կաց, սիրելիս, վար առնենք առհետ
Լուսաբոլորկման համար ծառայած՝ դեղնամաշ հինը
Եվ կախենք մեր նոր վարադուլընե'րը...

ԵՐԳ ՃԱՆԱՊԱՐՀԻ

Յ՛լ, շարունակե՛նք ճամփան, բարեկա՛մ,
 Կեսո՛ր է արդեն, իսկ լեռը բա՛րձր է և անդնդախոր.
 Կանգնած է մեր դեմ նա այնպես հպա՛րտ ու
 անմատչելի,

Բայց նա խտտադե՛մ բարձր է որքան,
 Այնքան համա՛ռ է մեր երթը այսօր.
 Վերելքի կամքը՝ այնքան մոլեգին,
 Տե՛ս, մեզնից վերև ու մեզնից հա
 Ահա մարդկային երթերը անքուն
 Մերթ խաղաղավետ,
 Ու մերթ փորձովյան տաղնապներով լի,
 Մերթ՝ վտանգների սարսուռը աչքում՝
 Անսկի՛զբ, անվե՛րջ ու անհատնելի՛
 Զգվո՛ւմ են, ելնո՛ւմ
 Դեպ այս լե՛ռն ի վեր,

դեպի կատա՛րը,
 դեպի կատարո՛ւմ.

Ուրեմն մե՛նք էլ քայլենք, բարեկա՛մ,
 Ահա քայլ առ քայլ, կայան առ կայան
 Մենք վե՛ր ենք ելնում.
 Օղը վերևում պա՛րզ է ավելի, մաքո՛ւր, երկնայի՛ն,
 Ասում են այնտեղ, ավելի վերում
 Արևը մարդուն այնպես մոտի՛կ է, այնպես մտերի՛մ.
 Մարդը այնտեղից ավելի վճիտ աչքով է նայում,

Ու նրա դիմաց աշխարհն է բացվում՝ երանության
մեջ...

Բարձրանա՛լ, այնտե՛ղ բարձրանալ անվերջ,
Թող հոգնությունը պարուրի՛, այրի՛ մեր ոսկորները,
Վայրի ժայռերը ոտքերն արշունեն,
Ցավից կարծրանան թող նրբանները,
Բայց քայլե՛լ, քայլե՛լ
Քայլել՝ հայացքը մխրձած հեռու,
Այդ հեռուներով լցվե՛լ, արբենա՛լ,
Եվ միշտ աշխարհում
Անհասությանը մի օր հասնելու
Տենչա՛նքն ունենալ...

21 III 46

Գ Յ Ա Ի Ղ Ա Ի Մ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՊԵՅԶԱԺ

Կուշ է եկել սարի գլխին մենակյաց վանք մի
կիսավեր,
Մինչ գյուղի մեջ դպրոցի նոր հոյակերտն է բարձրացել
վեր,
Մինչ նրա շուրջ աչք են բացել ճերմակ շենքեր
մտերմադին,
Մինչ ժպտում են մանկահասակ ուռիները դետի
ալիին,
Մինչ նոր կամուրջն է տիրաբար ալիերից ալի
ծիածանվել,
Մինչ գետն անդին ծայր է առնում ու հորձանքվում
է սարն ի վեր,
Ալիկոծո՞ւմը արտերի, ուր տրոփում է անդադրում
Կոմբայնը, որ մակույկի պես օրորվո՞ւմ է
ալիքներում:

Մեկիկ-մեկիկ վար են թափվում վանքի քարե՛րը
օրեցօր...

ԱՆՈՒՅԻ ԵՎ ԳԱՅԻՐ

Գյուղի դպրոցում աշակերտ էինք,
Մասնակցում էինք շաբաթօրյակին,
Ուռենու փոքրիկ շիվեր տնկեցինք
Գյուղ բերող ճամփի երկու եզերքին:

Կանաչե՛ց ուռին, դու զինվո՛ր դարձար,
Գյուղ բերող ճամփով կռի՛վ գնացիր,
Ծառերը կանգնած նայեցին երկար
Ու դեռ այդպես էլ կանգնա՛ծ մնացին:

Կանգնա՛ծ են այդպես ու ամեն տարի
Եկվորին զո՛ւ են անում կանաչով.
Գյուղ բերող ճամփով, ա՛խ, դո՛ւ էլ դայիր
Քո ձեռքով տնկած ծառերի միջով...

16 VII 48

ԺԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ասեւ ես, որ այս իրիկուն
Կհանդիպենք գյուղի ծայրին,
Եւ իմ սիրտը թաքուն զարկում,
Սպասում է երեկոյին:

Բայց կոլխոզի դեղի նման
Ա՛մպ է կանգնել ողջ երկնքում,
Երևում է, որ անպայման
Անձրե՛կ դա այս իրիկուն:

Մեկ տխրում եմ, որ մենք այսօր
Չե՛նք հանդիպի գյուղի ծայրին,
Մեկ ուրախ եմ, որ բախտավոր
Անձրե՛կ դա չոր արտերին:

Անձրե՛կ թող դա, որ թարմանա՛ն
Հեկտարներս բարձր բերքի.
Հանդիպումը դեռ թող մնա,
Հետաձգենք գալ կիրակի՛...
...

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Լռում է մեր զվարթ խոամբը,
Երբ որ դու ես երևում,
Քեզնով լցվո՛ւմ է ալոամբը
Ու ողջ աշխա՛րհն է լցվում:

Ու նայո՞ւմ են աղջիկները
Կարոտով քո հտեկց,
Թեև գիտեն քո աչքերը
Փնտրում են ու գտնում ի՛նձ:

Օղակավար Համասփյուռն էլ
Շքանշան ստացավ,
Ու քեզ համար, իբր, ասում են
Նա՛ էլ ունի սիրո ցավ:

Ճիշտն ասած, ես... քիչ խանդում եմ,
Չէ՞ որ գիտեմ տազնապով,
Դու լավագույն փեսացո՞ւն ես՝
Մեր կոլխողի մասշտաբով...

23 V 48

ՏԵՍԱԿՅՈՒԹՅԱՆ ՊԱՀԻՆ

Ա՛խ, ինչ լա՛ւ է գիշերին,
Գործից հետո՝ ամեն օր,
Մեկտեղ նստել այս քարին
Եւ հոգնած և բախտավոր:

Ողողվել է ներքևում
Գյուղը՝ լույսով լուանյակի,
Լուսնի ցո՛ւքն է օրորվում
Հայելու մեջ ջրանցքի:

Դու լսո՞ւմ ես, ջրերը
Իմ ու քո արտն են դնում.
Մերկ ցորենի ծիլերը
Բարձրանո՞ւմ են, զորանո՞ւմ:

Ստանալի՞նք ես ու դու
Ամենից շա՛տ՝ հեկտարից
Ու լինելի՞նք շրջանում
Առաջավո՞ր բոլորից:

Եւ այս տարի, Լուսի՛կ ջան,
Մե՛նք էլ հերոս դառնալինք,
Հետո մեկտեղ Երևան
Սովորելո՞ւ գնալինք...


ՄԵՐ ԱԿՈՒՄԲԸ

Մեր աղո՛ւմբը, մեր աղո՛ւմբը,
Հիմնադրվե՛ց երբ աղումբը,
Հենց այդ օ՛րն էլ՝ նիստից առաջ
Իմ Շուշիկից խոստում առա:

Բայց նա ասեց համառ կարգով՝
Երբ ավարտվի՛ աղումբը նոր,
Այն ժամանա՛կ միայն, վերջում
Հարսնի՛ք կանենք նոր դահլիճում:

Ա՛խ, աղո՛ւմբը, մեր աղո՛ւմբը,
Ուշանո՛ւմ է մեր աղումբը.
Ո՛ւժ տանք, տղե՛րք, կյա՛նքս վկա,
Համբերելու էլ սիրտ չկա...

23 V 48



Ա. ՍՈՒՐԿՈՎԻՆ

Կ. Սիմոնովից

Հիշո՞ւմ ես, Ալյո՛շա, ձամփեքը Սմոլենսկի,
Ինչպե՞ս էին թափվում անձրևները այն շար,
Ինչպե՞ս էին կանաչք հոգնած, առանց խոսքի
Մեղ ջուր բերում՝ թրջված անձրևներից երկար:

Ինչպե՞ս էին սրբում արցունքները առաս,
Ու շշնջում թաքուն՝ «Աստվա՛ծ թող ձեզ փրկի»
Կոչում էին իրենց նորից գինվորի կին,
Ինչպե՞ս հին Ռո՛ւսիայում՝ դարեր առա՛ջ:

Արնո՛վ ու արցունքո՛վ չափած, քան վերստերով
Ճանապարհն էր ձգվում՝ անհասնելի՛, անծա՛յր,
Գյուղե՛ր, գյուղե՛ր, գյուղե՛ր ու շիրիմներ խռով,
Որ դեռ նայո՞ւմ էին մեր ետևից երկար:

Կարծես ամեն գյուղից, ամեն շիրմաքարից
Խաչերն, ինչպե՞ս ձեռքեր, վեր պարզելով համառ
Այդ մեր նախնիներն են լուռ աղոթում նորից
Ասածուն չհավատացող իրենց թոռանց համար:

Գիտե՛ս դու, երևի այդ հայրենիքը չէ՛ դեռ
Իմ քաղաքի տունը՝ շքեղ ու անթերի,
Այլ այն շենե՛րը, ուր մեր պապե՛րն են ապրել,
Պարզ խաչերով նրանց անշուք շիրիմների:

Չգիտե՛մ դու ինչպես, բայց այս անեղրական
Չգվող թախի՛ծի հետ, արցունքի հետ այրու,
Լացող երգերի հետ ինձ առաջին յանգամ
Պատերազմը կապեց այստե՛ղ, այս շենե՛րում:

Հիշո՞ւմ ես, Ալյո՛շա, գյուղը Բարխուլյան,
Այն խրճիթը, ուր սուր՝ մի աղջի՛կ էր ձայնում,
Ու պառավին այն հեղ, որ կանգնել էր անձայն,
Ողջը ճերմակ հագած՝ ահեղ այն ծերունուն:

Դե ի՞նչ ասել նրանց, ինչո՛ւ մխիթարել.
Բայց մայրական հոգով զգալով լիշտն ասես
Հիշո՞ւմ ես, պառավը ասաց «հարազատե՛ր,
Դուք գնացե՛ք, մենք դեռ ձեզ կսպասենք»:

«Ձեզ կսպասե՛նք» ասին հանդեր, արոտ ու լեռ,

«Ձեզ կսպասե՛նք» ասին անտառներ նորից.

Գիտե՛ս ինչ, Ալյո՛շա, անվերջ թվում է ինձ
Իմ ետևից նրանց ձայնը դալի՛ս է դեռ:

Ռուսի սովորույթով՝ միայն հրդեհ ու մահ

Թողած իրենց ետև՝ նահանջի մութ ճամփին,

Մեր դեմ ընկերներն են մեռնում՝ ռուսի նման

Պատըռտելով շապի՛կն իրենց կրծքին:

Մեզ դեռ խնայո՞ւմ են գնդակները, սակայն
Արդեն քանի՛ անգամ մեռած ինձ հաշվելով՝
Ես հպա՞րտ եմ եղել՝ իմ լա՛վ, իմ ոռւսաւա՛ն
Իմ դա՞ռ հողի համար, ուր ծնւել եմ սիրով:

Որ այդ հողի վրա ինձ մեռնե՛լ է տրւած,
Որ աշխարհ է բերել ինձ ոռւս մա՛յրը մի օր,
Որ ճամփեւելով կռւի՛ ինձ ոռւս կիներ սրտանց
Գրկե՛ց երեք անգամ՝ ոռւսի ձեռ՛ով...

ՀԱՅՐԵՆԻՔ

Իլյա Սելվինսկուց

Պատերազմի բքադալար ճամփեքին
Ես կծեծեմ պատահած դուռն ատաղին
Նվ չիմացած խրճիթում ով կա, սակայն
Որդո՛ւ քայլով ես կմտնեմ դեպի ներս,
Ու փնտրելով այնտեղ հայացք մայրական
Կշրշամ «Մա՛յր, կընդունե՞ս...»
Չեմ սպասի պատասխանի, կհանեմ
Վալենկաներս ցեխոտ,
Տանտերերը թե դժգոհե՛ն էլ իմ դեմ՝
Ես կքնե՛մ հանգիստ մինչև առավոտ.
Իսկ առավան՝ զարթեցնելով կասեն ինձ՝
«Վե՛ր կաց, որդի՛, անո՛ւշ արա մեր հացից...»

Գիշերվա մեջ թե հանդիպես զինվորի,
Չիմանաս էլ նրա անունը անգամ
Բաց նրա մոտ խորքերը քո վշտերի
Ու կգտնես քեզ կենդանի բարեկամ:
Նա կկիսի ոչ միայն վիշտդ առժամ,
Այլ քեզ հասած ճակատագիրը դաժան:

Ակնարկո՛ւմ իսկ մենք հասկանում ենք խորունկ
խոհերը մեր, զգացումնե՛րն անթարգման,
Մեծ աղետը կապել է մեզ իրարո՛ւ,
Վիշտը՝ վշտին, խնդուժյունը՝ խնդուժյան:
Եվ ամեն սի՛րտ, ամեն հոգի՛ կարեկից
Դարձել է մեզ հայրենի ծուխ ու եղերք,
Ռումբի զարկով մեզ չե՛ն զրկի մեր տնից,
Մեկ մեկի մեջ մենք հայրենի՛ք կգտնենք...

ՍՊԱՍԻՐ ԻՆՁ

Կ. Սիմոնովից

Սպասի՛ր ինձ, և ես կգա՛մ,
Բայց սպասիր երկա՛ր,
Երբ անձրևը թախծող աշնան
Ծածկե հող ու անտառ,
Սպասի՛ր, երբ ձյունը դիզվի,
Երբ լինի շոգ այրող,
Երբ ուրիշի շե՛ն սպասի
Սրտերն՝ արդեն դավող:
Սպասի՛ր, երբ քեզ օրերը
Նամակ էլ չբերեն,
Կձանձրանա՛ն երբ բոլորը
Սպասելուց արդեն:

Սպասի՛ր ինձ, և ես կգա՛մ,
Մի՛ ցանկանա բարի
Նրա՛ն, ով որ «մոռացության
Ժամն է արդեն» կասի:
Թող հավատան մայրս ու որդիս
Որ ես չկամ արդեն,
Ընկերներս՝ հոգնած վշտից
Նստեն կրակի դեմ,
Հիշատակիս համար հավետ
Խմեն գինին կարմիր,

Դու սպասի՛ր, դու նրանց հետ
Գինի դեռ մի՛ խմիր: . .

Սպասի՛ր ինձ, և ես կգա՛մ,
Ի հեճուկս մահի՛, .
Ինձ շսպասողը թող անժամ
«Բախտը բերե՛ց» ասի,
Չե՛ն հասկանա նրանք, թե ոնց
Կրակների միջից
Սպասումո՛ւ քո այդ անխոնջ
Աղատեցի՛ր դու ինձ.
Ու թե ինչպե՛ս ես ապրեցի,
Կխմանանք դո՛ւ և ե՛ս —
Շա՛տ պարզ, դու ինձ սպասեցիր,
Ուրիշ ո՛չ ոք ինչպես:

ԵՂՋԵՐՈՒՆ

Եվգենի Դոլմատսկուց

Կանաչ, ծաղկաբույր հունի՛սն է նորից,
Հանգստանում են տանկերն ստվերում,
Բելովեժսկի անհուն անտառից
Դուրս եկավ ահա ոսկյա եղջերուն:

Սեգ եղջյուրների ճյուղավոր թագով
Ցողերը վար է թափում ճյուղերից,
Կանգնում է ու լուռ, երկշոտ հայացքով
Տանկիստներին է նայում ահալից:

Եղջերվի ազնի՛վ, պատանի հայա՛ցք,
Ու հավերժորեն դարմացա՛ծ այնպես,
Լարերի նման ոտքերը բարակ,
Մորթը՝ արևով օծված է ասես:

Լռում են հանկարծ զինվորները դուռ,
Որ տեսել են բյուր արյուններ ու մահ,
Ավտոմատները՝ լցրած զնդակով
Շարված են տանկի դրահի վրա:

Անտա՛ռ է մտնում եղջերուն էլի՝
Վեհատե՛սք, հպա՛րտ ու խաղաղավետ,
Խառնած շրշյունը ոտնահետքերի
Անհուն անտառի սոսավյունի հետ...

ՍՈՖԻԱ. ԿՐԵՎՍԻՆ

Ալեքսեյ Սուրկովից

Խայտում է բոցը նեղ վառարանում,
Արցունքի պե՛ս է խեղը փայտերին,
Գետնափորի մեջ հարմոնն է պատմում
Ժպիտի՜դ մասին, աչքերի՜դ մասին:

Քեզնի՜ց, քեզնի՛ց են շշնջում միշտ ինձ,
Թփերը՝ ձմռան դաշտերում հիմի.
Ուզում եմ, որ դու լսե՛ս քո հեռվից,
Ինչպե՛ս է թախծում ձայնս կենդանի:

Ա՛խ, դու հեռո՛ւ ես, հեռո՛ւ ես, հեռո՛ւ,
Մեր միջև ձյունե՛ր, ձյունե՛ր անսահման,
Օրե՛ր էլ քայլեմ՝ քեզ շե՛մ հասնելու,
Իսկ մինչև մահը չորս քա՛յլ է միայն:

Երգի՛ր, հարմո՛ն իմ, բուքին հակառա՛կ,
Ե՛տ կանչիր կորած երջանկությունը,
Իմ այրվող սիրուց, սիրուց իմ կրակ
Ցուրտ գետնափորում տա՛ք է, դարո՛ւն է...

ԶԻՆՎՈՐԻ ՄԱՀԸ

Էդվարդոս Մեմելայսիսից

Արեգակն էլ ասես հուր նետեր է թափում,
Ամեն ինչ շնչում է ռազմի բույրո՛ւլ,
Իսկ զինվորը հանգած լուռ ընկե՛լ է
դաշտում,

Ու երկինք է նայում բաց աչքերով:

Ու թվում է սակայն նա լոկ պահո՛ւլ է մի
Պառկել հողին, որ քիչ հանգստանա.
Կողքին սուրն է դրել, ու թվում է հիմի
Ելնի՛ պիտի ու դեռ առա՛ջ դնա...

ԵՂԲԱՅՐԸ

Սուլումեա Ներխաից

Մայրամուտի ստվեր ընկավ
Երկնի մովին անբիծ,
Եղբորս կողմից նամակ եկավ
Կովի հեռու ճամփից:

Գրում են, թե եղբայրս քաջ
Ասես դուցազն էր սեդ.
Ուր կուլում էր՝ հողը կանաչ
Արնից դառնում էր սև:

Հայրենիքն էր ամենից շատ
Սիրում սրտի խորքում...

.

Շիրմի վրա նրա անհայտ
Քույր քամի՛ն է սդում:


Իսկ շրջում են դեռ աշխարհում
Նամականերս հիմա,
Թե անո՛ւն կա, թե ազգանո՛ւն,
Կոկ եղբա՛յրս չկա:

Սպասեցի՛ քեզ անգադար՝
Փափուկ գորգեր փռած,
Գլուխդ ինչո՞ւ դրիր եղբայր
Չոր քարերի վերա...



Սերգեյ Օռլով

Մառաններում քանի՜ տարի
Պահված էր հուր գինին,
Մի բախտավոր, պայծառ օրի
Ժպտա՛ց նա աշխարհին:
Խաղաղության դալուստն էր դա,
Որ աշխարհին ծագեց,
Այգեպանը գիտեր՝ կգա՛
Այդպիսի օր մի մեծ:
Ու դո՛ւրս հանեց մառաններից
Գինին, ինչքան որ կար,
Ու խմեցրեց հաղթողներին,
Զարկեց գետինն ի վար:
Ծիծաղում է գինվորն՝ արբած
Բախտով, գինով այդ հին,
— Ինձ չզգեանեց զնդակը, բայց
գետին զարկեց գինի՛ն...



Անդգեյ Օդով

Ահա այն մարդը.

դեմքը նրա

խիստ սպիտակից ցանցն է պատել

Բայց դու, դու նայի՛ր, նայի՛ր նրան,

Մի՛ թեքիր աչքը քո անընտել:

Նա կռիվ գնաց՝ մոռացած մա՛հ,

Մոռացած կշա՛նքը իր ծաղկալից,

Որ դու, դու մնաս այդպես չքա՛ղ,

Նայեն՝ չպոկե՛ն աչքը քեզնից...

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ

ԱՏԵՎԱՆԻ ՇՆԻՍՏԱՆԻԿ

Դուք չկա՛ք, դեռ օդ ու կալ էք միայն,
Ձեր մասին մենք լուր դուռնակո՛ւմ ենք դեռ.
Սակայն տալո՛ւ ենք մենք ձեզ պատասխան,
Դուք անբաժա՛ն էք մեզանից, սերունդնե՛ր:

Ծա՛նր էր պայքարը: Թվում էր մեկ-մեկ,
Թե անպաշտպան է դալիքի օրը,
Նռնա՛կ էր նետում թշնամին երբ մեզ,
Ձեզ է՛լ էր հասնում նրա բեկորը...

ՀՅՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍ ԵԱՐՅԱՆԻ ՄՈՏ.

Վ. Զվյագինցևայից

Կանաչադարդ ճամփան մեղ առաջ է տանում,
Մենք դուրս եկանք ահա մի զովաշունչ աշգի,
Վերջալույսն է փռվել հեռու հորիզոնում,
Վերջալույսը՝ նման հին պարսկական գորգի:

Այդուց մեր դեմ ելավ՝ արդեն քիչ ալեհեր
Նկարիչը՝ ամռան իրիկվան պես հանդարտ,
Արհեստանոցն ահա ու կտավներ, ներկեր,
Եվ ի՛նչ, ասես այդ լուռ կտավներից հանկարծ
Ելա՛վ, հորդե՛ց հախուռն, սենյակի մեջ շողաց
Արևի մի աշխարհ և ծովացավ մեր դեմ
Ուտրամարինը լուրթ ու կապույտում այդ բաց
Լեռներ՝ ասես լույսից, քարաժայռե՛ր վսեմ,
Շեկ հորձա՛նքը մրգի, ու աշգիներ, տներ,
Ծաղկաշորեր հագած կանաչ դալարիւրան,
Ողջը ասես թե կյա՛նք ու թե երա՛զ լիներ,
Ու աշխա՛րհն էր հագել զգեստն իր տոնական...

Երևում էր ծերուկ Արարատը հեռվից,
Հսկայական, անթափ, ինչպես հավերժություն.
Ու մոլբերտն էր կանգնած աչքում խաղողների,
Իսկ խաղողը խունկ էր, սակի ու կաթնաթուզ:
Եվ կանաչի, բույրի, արևի մեջ սուղված՝
Այնտեղ նկարում էր վարպետը մեծ,
Շուրջը Հայաստանն էր շողում՝ արտաքուլված
Մարտիրոս Սարգսնի աչքերի մեջ...

ՓՈՇՈՏ ԳՐՔԵՐԻ ՄԵՋ

Վ. Տուգնովայից

Փռչում գրքերի մեջ կա միայնակ մի դիրք,
Մաշված մի հատորիկ խոնարհադեմ,
Բանաստեղծը նրա այս տողերը գողտրիկ
Ո՛ւմ համար է գրել, ես չգիտեմ:

Թո՛ղ որ նա մտածել ու սիրել է տարբե՛ր,
Ու մենք գտրերի մեջ չենք հանդիպել իրար,
Եթե այս տողերից ես լսվի՛ս եմ արդեն,
Նա գրել է ուրեմն Ջենց ի՛նձ համար...

Հուսամուտի մոտ երկու լորենի.
Մեկտեղ են ծնվել նրանք աշխարհում,
Մեկտեղ բարձրացել, կանգնել են հիմի,
Ու նույն քամի՛ն է նրանց օրորում:
Ու ծերանում են նրանք իրար հետ՝
Լի երջանկությա՛մբ մի խաղաղավետ:

Բայց միթե՛ արդյոք գիտեն լորենիք
Երջանկությունը իրենց անսահման,
Ասա՛, մենք ինչպե՛ս պիտի ապրենք
Այս աշխարհի մեջ իրարուց բաժան,
Ես սարսափում եմ ետ նայել մեկ-մեկ՝
Դու ծնվել էիր ու ծաղկել հեռո՛ւ,
Եվ ի՛նչ, կարող էր պատահել, որ մենք
Զհանդիպեի՛նք երբեք իրարու...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՃԱՆԱԳԱՐՀՆԵՐ

	67
Պարմիր հրապարակում	3
Մասկվայում	4
Մետրոյի քարտեզի մոտ	5
Չմեռը Մոսկվայում	6
Մոսկվայի երեխաները	7
Լենինգրադ	9
Արևը Լենինգրադում	11
Ռայնիսի շիրմաքարը Ռիգայում	13
Ջամբուլի հորեղյանը Ալմա-Աթայում	14
Մտերմություն	15
Ղազախստանում	16
Լեռները	18
Հողի կարոտը	19
Ինքնաթիռում	20
Խոհ գնացքի մեջ	21
Հանգստի տանը	22
Երգ թափառումի	25

II . ՆՈՐԻՑ ՆՐԵՎԱՆՈՒՄ

Նորից նրկանում	27
***	29
Նրկանի աշունը	30
Ընտանիքում	32

	42
ժամացույցը	34
Մեր դրոշը	35
Կառուցման երգերից	36
Ներքող Հայաստանին	37
Հայոց պատմության դասին	38
Ժողովրդիս	40
Ֆրագմենտ	41
Երգ Արսիյանի մասին	42
Սեանին	43
***	44
Մտերվացի կարտառ	45
***	47

III. ՍԻՐՈՒՄ ԵՄ

Ջես սիրո մասին	48
***	49
Կարտառի կանչ	50
***	51
Որոնում	52
***	54
Տոնական երեկո	55
Երգ՝ գարնան մեջ	57
***	58
Պատերազմից հետո	59
Եկգ ճանապարհի	61
Գյուղում — գյուղական տեղում	63
Ս' իս, դու էլ գայիր	64
Ճամադրություն	65
Ջոտառվանություն	66
Տխրակցության պահին	67
Մեր ահումբը	68

IV. ՀԱՐԱՋԱՏ ՉԱՅՆԵՐ

Ա. Սուրուկովին (Կ. Սիմոնով)	.	.	.	.	69
Հայրենիք (Ի. Սերվինսկի)	.	.	.	.	72
Սպասիր ինձ (Կ. Սիմոնով)	.	.	.	.	74
Նղջերուն (Ն. Դոլմատովսկի)	.	.	.	.	76
Սոֆիա Կրևսին (Ա. Սուրկով)	.	.	.	.	77
Զինվորի մահը (Է. Մեծեղայտիս)	.	.	.	.	78
Նղբայրը (Ս. Ներիս)	.	.	.	.	79
*** (Ս. Օսլով)	.	.	.	.	80
*** (Ս. Օսլով)	.	.	.	.	81
Սերունդներին (Ս. Շչիպաչև)	.	.	.	.	82
Հյուր Մարտիրոս Սարյանի մոտ (Մ. Զվյագինցև)	.	.	.	.	83
Փոշոտ գրքերի մեջ (Վ. Տուշնովա)	.	.	.	.	85
Քեր (Ս. Շչիպաչև)	.	.	.	.	86

Պատ. խմբագիր՝ ՀՐ. ՔՈԶՍԻՐ
 Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ
 Պատ. սրբագրիչ՝ Վ. ԴԱՔԵՍՅԱՆ



ՎՖ 03389, պատվեր 161. տիրած 3000:

Տպագրական 6 մամուլ:

Հանձնված է արտադր 15/IV 49 թ.

Ստորագրված է տպագր. 30/VI 49 թ.

Հայտարարություն. Վարչության

№ 3 տպարան, Արտվերդյան

№ 65, Երևան, 1949 թ.

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Ցող	Տպված է	Պեսք է լինի
3	6 ժ.	Էջ	է
11	3 ժ.	Մուցել	Մեծացել

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040968

ԳԻՆԸ 2 Ռ.

